ՀԽՍՀ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿՈՈՊ»

ՁԵՌՆԱՐԿ

ԳՅՈՒՂԿՈՈՊՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂ-ՎԵՐՍՏՈՒԳԻՉ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՒ ԽԱՆՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

Հ 23469

ՀԱՅԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿՈՈՊ»-Ի
1937 ԾԵՐԽՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԹՍՀՄ կենտգործկոմի և ժողկոմխորհի վորոշումը «պետական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և կոոպերացիայի գույքը պահպանելու և հանրային (սոցիալիստական) սեփականությունն ամրապնդելու մասին» (1932 թ. 7 ոգոստոսի որենքը) . . . . . 3 էջ
2. Կանոնադրություն գյուղկոոպի Վերահսկիչ-Վերստուգիչ Հանձնաժողովի մասին . . . . . 5 »
3. Վերահսկիչ-Վերստուգիչ Հանձնաժողովի աշխատանքը 10 »
4. Հուշատետր խանութային հանձնաժողովին. . . . . 15 »
5. Գայքար վատնումների ու յուրացումների դեմ . . . 19 »

Հայֆնտարկոոպի տպարան, գլավլիտ № 80, պատվեր 326, տիրաժ 800

ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Պետական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և կոոպերացիայի գույքը պահպանելու և հանրային (սոցիալիստական) սեփականությունն ամրապնդելու մասին:

Վերջին ժամանակներս հաճախակի են դարձել բանվորների և կոլտնտեսականների բողոքները՝ խուլիգանական և ընդհանրապես հակահեղափոխական ելեմենտների կողմից յերկաթուղային և ջրային տրանսպորտում բեռների հափշտակության (գողության) և կոոպերատիվային ու կոլտնտեսային գույքի հափշտակության (գողության) վերաբերիալ: Հաճախակի են դարձել նաև բողոքները կոլտնտեսությունից դուրս գալ չցանկացող և նրանց ամրապնդման ավելի և անձնվեր կերպով աշխատող կոլտնտեսականների նկատմամբ կուլակային տարրերի կողմից գործադրվող բռնությունների և սպառնալիքների մասին: ԽՍՀՄ Կենտգործկոմը և ժողկոմխորհն ընդունում են, որ հանրային սեփականությունը (պետական, կոլտնտեսային, կոոպերատիվային), որը հանդիսանում է խորհրդային կարգերի հիմքը, սրբազան է և անձեռնմխելի. այն մարդիկ, որոնք հանդգնում են ձեռք տալ հանրային սեփականությանը, պետք է համարվեն, որպես ժողովրդի թշնամի, որի համար և հանրային գույքի հափշտակության դեմ մղվելիք վճռական պայքարը հանդիսանում է խորհրդային իշխանության որգանների առաջնագույն պարտականությունը:

1.

1. Յերկաթուղային և ջրային տրանսպորտում բեռներն իրենց նշանակությամբ հափսսարեցնել պետական գույքին և ամեն կերպ ուժեղացնել այդ բեռների պահպանումը:

2. Յերկաթուղային և ջրային տրանսպորտում բեռների հափշտակության համար, որպես դատական ռեպրեսիվ միջոց, կիրառել սոցիալական պաշտպանության առավելագույն չափը — գնդակահարություն, բռնագրավելով ողջ գույքը և մեղմացուցիչ պարագաների դեպքում փոխարինելով այն վոչ պակաս, քան 10 տարվա ազատազրկումով և գույքի բռնագրավումով:

3. Ձկիրառել նիրում տրանսպորտում բեռների հափշտակման գործով դատապարտված հանցագործների նկատմամբ:

2.

1. Կոլտնտեսությունների և կոոպերատիվների գույքն (դաշտում դտնված բերքը, հասարակական պաշարները, անասունը, կոոպերատիվային պահեստները, խանութները և այլն) իր նշանակությամբ հավասարեցնել պետական գույքին և ամեն կերպ ուժեղացնել այդ գույքի պաշտպանումը հափշտակություններից։

2. Կոլտնտեսային և կոոպերատիվային գույքի հափշտակության (գողության) համար, վորպես սոցիալական պաշտպանության խիստ (ռեպրեսիվ) միջոց կիրառել սոցիալական պաշտպանության առավելագույն չափը՝ գնդակահարություն, բռնագրավելով վողջ գույքը և մեղմացուցիչ պարագաների դեպքում փոխարինելով այն՝ վոչ պակաս, քան տաս տարվա ազատազրկումով և գույքի բռնագրավումով։

3. Ներումը չտարածել այն հանցագործների վերաբերմամբ, վորոնք դատապարտված են կոլտնտեսական և կոոպերատիվ գույքը յուրացնելու համար։

3.

1. Վճռական պայքար մղել հակահասարակական, կուլակային, կապիտալիստական այն տարրերի դեմ, վորոնք բռնություն կամ սպառնալիք կկիրառեն կոլտնտեսականների նկատմամբ, նպատակ ունենալով դրդել նրանց դուրս գալ կոլտնտեսությունից, վորպեսզի բռնի կերպով կործանեն կոլտնտեսությունը։ Այդ հանցագործությունները հավասարեցնել պետական հանցանքներին։

2. Կուլակային և այլ հակահասարակական տարրերի բռնություններից ու սպառնալիքներից կոլտնտեսականներին պահպանելու գործով, վորպես դատական պատասխանատվության միջոց, կիրառել 5-ից մինչև 10 տարվա ազատազրկում կենտրոնացման ճամբարներում։

Այս գործով դատապարտվածների վրա չտարածել ներումը։

ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ-ի ժողկոմխորհի նախագահ

Վ. ՄՈԼՈՏՈՎ (Սկրյաբին)

1933 թ. 7 օգոստոսի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԳՅՈՒՂԿՈՊԻ) ՎԵՐԱՀՍԿՈՂ-ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ*)

Վ.Վ.Հ իր ամբողջ աշխատանքի մեջ ղեկավարվում և նրանով, որ պետական ու կոոպերատիվ սեփականությունը խորհրդային հասարակարգի հիմքն և հանդիսանում և այն անձնավորությունները, որոնք համայնական սոցիալիստական սեփականության վրա յուրացման վորեվե փորձ են կատարում ժողովրդի թշնամիներ են։ «Թույլ տալ հանրային սեփականության գողացումն ու հափշտակումն—միևնույն և՝ բանը վերաբերվում և արդյոք պետական սեփականությանը, թե կոոպերատիվ ու կոլտնտեսային սեփականությանը—և անցնել նման հակահեղափոխական այլանդակությունների կողքով—նշանակում և՝ նպաստել խալխելու խորհրդային հասարակարգը, որը հենվում և հանրային սեփականության վրա, որպես իր բազայի վրա»։ (Ստալին)։

Վ.Վ.Հ խստորեն հետևում և հանրային կոոպերատիվ սեփականության ամբողջականությանն ու պահպանմանը և իրականացնում և գյուղկոոպի, նրա ձեռնարկությունների, թեյատների, ճաշարանների, փռերի և այլն կազմակերպչական գործունեության վերաբերմամբ վերահսկողությունը համաձայն այն խնդիրների, որոնք դրված են ԽՍՀՄ ԺԿԽ-ի և Համկ(բ)կկկ-ի 29 սեպտեմբերի «Սպառողական կոոպերացիայի աշխատանքի մասին գյուղում» որոշման մեջ։

Վ.Վ.Հ-ն անհաշտ պայքար և մղում վատնումների կողոպուտների և ապրանքների, դրամի և դույքի պակասորդների, բյուրոկրատիզմի, քաշքշուկների և զնորդների հետ կոպիտ ու ան-

---

*) Այս բրոշուրի մեջ վերահսկող-վերստուգիչ հանձնաժողով բառերը կըրճատված են՝ տեղ փոխարինված և «Վ.Վ.Հ» տառերով։

ուշադիր վերաբերմունքի դեմ, հսկում և Խորհրդային գների ճիշտ քաղաքականություն կիրառելուն և պայքարում է սպառողներին թերաչափումների, թերակշռումների միջոցով և հաշվարկումներում խաբելու դեմ։

ՎՎՀ-Ի ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

1. Վ.Վ.Հ-ն ստուգում է գյուղկոոպը յերևք ամիսը մի անգամից վոչ պակաս, իսկ դրամարկղը, դերխոռնների հաշիվները, առհաշիվ անձիք—ամիսը մի անգամ։ Վ.Վ.Հ-ն սահմանված կարգով ստուգում կատարելիս պարզում է—Արդյոք չկան վատնումներ և կողոպտումներ, գրանցված են արդյոք բոլոր դրամական ու նյութական արժեքները, նախահաշվով նախատեսած ծախսերի դեմ փաստորեն կատարված ծախսերը համապատասխանում են արդյոք, գյուղկոոպը ժամանակին և արդյոք իր պարտականությունները պետության առաջ կատարում, ինչպես և վճարում իր պարտքերը և ինչպես է հավաքում իր ստանալիքները, հաշվապահական գրանցումներն, արդյոք համապատասխանում են այն սահմանված պահանջներին, վորոնք պիտի ունենան դրամական ու այլ արդարացուցիչ փաստաթղթերը։ Լրիվ և մասնակի ստուգումների ժամանակ անպայման պետք է կատարվի ապրանքային մնացորդների ցուցակագրում։

2. Վ.Վ.Հ-ն ստուգում և իր յեզրակացությունն է տալիս գյուղկոոպի յեռամսակային ու տարեկան հաշվեկշիռների և հաշվետվությունների մասին։

3. Իր աշխատանքի մեջ պլանայնություն մտցնելու նպատակով Վ.Վ.Հ-ն կազմում է ստուգողական աշխատանքների ամսական ու յեռամսակային պլաններ, համաձայնեցնում է այն իր ակտիվի հետ և ներկայացնում է շրջիկության նախագահի հաստատության։ Լրիվ ստուգումը կատարվում է գյուղկոոպի վարչության և փայատերերին տեղեկացնելով, իսկ մասնակի ստուգումները կատարվում են հանկարծակի։

4. Իր աշխատանքին Վ.Վ.Հ-ն մասնակից է դարձնում լավագույն կոլխոզնիկներին, հատկապես ակտիվ կոլտնտեսուհիներին կոոպերատիվ փայատերերի թվից և գյուղխորհրդի կոոպերատիվի փայատերերի թվից և գյուղխորհրդի կոոպերատիվ

կան սեկցիայի կազմից՝ հասարակական կանտրալորներին։

Գյուղկոոպի առանձին ձեռնարկությունների գործունեության վրա ամենօրյա վերահսկողություն ունենալու նպատակով (խանութներ, ճաշարան, փուռ և այլն) ամեն մի ձեռնարկի կցվում է կամ Վ.Վ.Հ-ի մի անդամը կամ գյուխորհրդի կոոպերատիվական սեկցիայի հասարակական կանտրալորների թվից մեկը՝ գյուղկոոպի տվյալ խանութի սպասարկվող ազգաբնակչությունից։

5. Հասարակական կանտրալորների միջոցով Վ.Վ.Հ-ն իրականացնում է իր կապը փայատերերի հետ՝ ըստ քներ հավաքելով նրանցից գյուղկոոպի վարչության և ապարատի գործունեության մասին, ինչպես և փայատերերի հայտարարությունները նկատված չարաշահությունների վերաբերմամբ։

6. Վ.Վ.Հ-ն աշխատում է շրջմիության նախագահի անմիջական ղեկավարությամբ, որի պարտականությունն է սիստեմատիկ հրահանգման միջոցով գործնական ոգեշնչություն ցույց տալ Վ.Վ.Հ-ի անդամներին իրենց աշխատանքների մեջ։

ՎՎՀ-Ի ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՆՆԵՐԸ

1. Վ.Վ.Հ-ն իր աշխատանքի մեջ իրավունք ունի ոգտվելու անհրաժեշտ այն բոլոր նյութերով որոնք պահանջվում են ստուգման ընթացքում։ Այդ նյութերի մշակումն կարևորության դեպքում կատարվում է գյուղկոոպի ապարատի կողմից.

2. Վ.Վ.Հ-ն գյուղկոոպի վարչության առաջ խնդիրներ և դնում կարգապահական տույժ յենթարկելու վարչության առանձին անդամներին կամ գյուղկոոպի ապարատի առանձին աշխատակիցներին ստուգման միջոցով հայտնաբերված զանցառությունների և չարաշահությունների համար մինչև իսկ աշխատանքից հանել և դատական պատասխանատվության յենթարկել։ Վ.Վ.Հ-ի աշխատանքի հետևանքով առաջացած բոլոր հարցերը, որոնք գյուղկոոպի գործերի կարգավորումն են պահանջում, անց են կացվում վարչության նիստերի միջոցով։ Գյուղկոոպի վարչությունը Վ.Վ.Հ-ի առաջարկների հետ չհամաձայնվելու դեպքում պարտավոր է հինգ որվա ընթացքում տարաձայնության առիթ տվող խնդիրները փոխադրել շրջմիության վարչության նիստին։

Այդ դեպքում յերբ Վ.Վ.Հ-ն հարց և դնում գյուղկոոպի վարչության ամբողջ կազմի փոփոխության մասին կամ նրա մեծամասնության և կամ գյուղկոոպի նախագահին հանելու մասին և յերբ այդ կապակցությամբ անհրաժեշտ և դառնում հրավիրել փայատերերի (կամ լիազորների) ժողով՝ հարցը նախորոք համաձայնեցվում և շրջմիությանն վարչության հետ։

3. Վ.Վ.Հ-ն պատասխանատվություն և կրում գյուղկոոպին պատկանող արժեքների համար և վարչության հետ միասին իր աշխատանքի համար հաշվետու յե փայատերերի առաջ, ինչպես և վերադաս խորհրդային ու կոոպերատիվ կազմակերպությունների առաջ։

4. Վ.Վ.Հ-ն պարտավոր և ձեվակերպել իր աշխատանքները համապատասխան փաստաթղթերում (արձանագրություններ, ակտեր, հաշիվների քաղվածքներ և այլն)։ Այդ փաստաթղթերի պատճենները հանձնաժողովը տալիս և գյուղկոոպի վարչությանը և շրջմիությանը համապատասխան միջոցառումների համար։

5. Վ.Վ.Հ-ի յեզրակացությունն և տալիս գյուղկոոպի հաշվետվությունների վերաբերմամբ՝ յեկամուտների և ծախսերի նախահաշիվների կազակցությամբ։ Բացի այդ նա տեղական մամուլում կանոնավոր կերպով հրապարակում և իր հայտնաբերած բացերը և չարաշահությունները։

6. Վ.Վ.Հ-ի անդամները գյուղկոոպի նիստերում մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով։ Ճիշտ նույն կարգով գյուղկոոպի վարչության անդամները մասնակցում են Վ.Վ.Հ-ի նիստերին։

7. Վ.Վ.Հ-ն ընտրվում և փայատերերի (կամ լիազորների) ժողովում գյուղկոոպի կանոնադրությամբ նախատեսված կարգով՝ յերեքից հինգ հոգի կազմով և յերկու տարի ժամկետով։ Հանձնաժողովի անդամները չեն կարող ընտրվել գյուղկոոպի վարչության և ապարատի աշխատակիցներից, ինչպես և վարչության անդամների և աշխատակիցների հետ մոտիկ ազգակցական կապեր ունեցող անձերից։

8. Վ.Վ.Հ-ի նախագահի կամ նրա անդամների փոփոխումը բոլոր դեպքերում կատարվում և բացառապես ընդհանուր (կամ լիազորների) ժողովի վրոշմամբ։

9. Հայտնաբերված չարաշահությունների և աշխատանքի

բացերի վերաբերմամբ ժամանակին միջոցներ ձեռք չառնելու համար Վ.Վ.Հ-ի անդամները ժամկետից առաջ կարող են հետ կանչվել և պատասխանատվության յենթարկվել մինչև խիստ դատական կարգով։

10. Վ.Վ.Հ-ի փոփոխության դեպքում նոր նախագահն իր պարտականություններին և անցնում ընդհանուր ժողովի (կամ լիազորների ժողովի) կողմից ընդունվելուց հետո։ Նա հին նախագահից ընդունում է գործերը հատուկ արձանագրությամբ, որի մեջ պիտի բովանդակեն հետևյալ խնդիրները.—

ա) Վ.Վ.Հ-ի անցյալ գործունեության արձանագրությունների և ակտերի ցուցակը, որոնք հաստատված են կամ չեն հաստատված փայատերերի ընդհանուր ժողովի կողմից,

բ) Վ.Վ.Հ-ի նկատողությունների և առաջարկների ցուցակը որոնք կենսագործված են կամ չեն կենսագործված գյուղկոոպի վարչության կողմից։

գ) Վ.Վ.Հ-ի ընդհանուր նկատողություններն այն անհրաժեշտ միջոցառումների մասին, որոնք պիտի կենսագործվեն նոր կազմված Վ.Վ.Հ-ի աշխատանքի ընթացքում։

11. Վ.Վ.Հ-ի նախագահը և անդամները վարձատրվում են գյուղկոոպի վարչության նախագահի ամսական դրույքի $^1/_{25}$-ը դրական գումարի չափով՝ ստուգումների համար փաստորեն աշխատած յուրաքանչյուր օրվա համար։

12. Վ.Վ.Հ-ի բոլոր ծախսերը կատարվում են նրա կողմից կազմված նախահաշվով, որպիսին հաստատվում է շրջմիության վարչության կողմից և մտցվում է գյուղկոոպի վարչական ընդհանուր ծախսերի նախահաշվի մեջ։

ՎԵՐԱՀՍԿԻԶ-ՎԵՐՍՏՈՒԳԻԶ ՀԱՆՁՆԱ-ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ցենտրոսայուզի նախագահությունն իր 25 ապրիլի 1934 թ. № 517 վորոշմամբ սահմանել և ստուգողական գործողությունների այն մինիմումը, վոր պետք է կատարեն գյուղկոոպների Վ.Վ.Հ-ները։ Այդ մինիմումը չկատարելու համար Վ.Վ.Հ-ի անդամները յենթակա յեն դատական պատասխանատվության։

Այդ մինիմումը հետևյալն է—

1. Դրամարկղը և առհաշիվ գումարները պետք է ստուգվեն ամեն առնվազը մի անգամ։

2. Յեկամուտների և ծախսերի նախահաշվի կատարումը պիտի ստուգվի յեռամսյակում առնվազն մի անգամ։

3. Խանութները պիտի ստուգվեն յեռամսյակը մի անգամ։

4. Գյուղկոոպի ամբողջ գործունեությունը (առևտուր, մթերումներ, հացաթխում և այլն) ստուգվում են տարեկան առնվազն մի անգամ։

5. Վ.Վ.Հ-ն անպայման պիտի իր յեղրակացությունը տա գյուղկոոպի յեռամսյակային ու տարեկան հաշվեկշիռների և հաշվետվությունների վերաբերմամբ։ Այդ հաշվեկշիռները և հաշվետվությունները չեն կարող հրապարակվել կամ շրջանառությանը ներկայացվել առանց Վ.Վ.Հ-ի յեղրակացության։

«Ներգերատեսչական ֆինանսական կոնտրոլի և զոկումենտալ ռեվիզիայի մասին» տարեկան ստուգումները, համաձայն 1936 թվի 19 ապրիլի որենքի, նշանակվում են շրջսպառկոոպմիության վարչության կողմից և կատարվում են հրահանգչի կողմից Վ.Վ.Հ-ի մասնակցությամբ։

Բացի այդ գյուղկոոպների յեկամուտների ու ծախսերի նախահաշիվները կազմելու վերաբերմամբ Ցենտրոսայուզի հաստատած հրահանգից յելնելով Վ.Վ.Հ-ն պետք է իր յեղրակացու-

թյունը տա գյուղկոոպերատիվ նախահաշվի մասին։ Գյուղկոոպերատիվ վարչությունը պարտավոր է Վ.Վ.Հ-ին հանձնել այդ նախահաշվի մի որինակը քննարկման և յեզրակացություն տալու համար փայատերերի ընդհանուր (կամ լիազորների) ժողովից առնվազը մի որ առաջ։ Վ.Վ.Հ-ն բացի իր գրավոր յեզրակացությունից նախահաշվի վրան (գրավոր) նախահաշիվը ստուգելուց հետո պարտավոր է բերանացի իր յեզրակացությունը զեկուցել փայատերերի ընդհանուր (կամ լիազորների) ժողովին։

Վ.Վ.Հ-ն պետք է գյուղկոոպերատիվ և նրա առանձին խանութների ու ձեռնարկների գործունեության ստուգում կատարի ամեն յեռամսյակի սկզբում՝ ինվենտարիզացիայի կապակցությամբ, ինչպես և հանկարծակի։ Առանձին կարևորության դեպքում (գեղծումների, չարաշահումների հայտնաբերում, աշխատող անձնակազմի կասկածելի վարքի և այլն) Վ.Վ.Հ-ն կարող է կատարել լրացուցիչ ու կրկնակի ստուգումներ հատկապես դրամարկղի և առհաշիվ գումարների, քանի որ հաճախ է լինում, որ վատնված գումարները ծածկվում են ժամանակավորապես փոխառված միջոցներով։

Վորպես վատնումների և յուրացումների դեմ պայքարի միջոց մեծ նշանակություն ունեն հանկարծակի ստուգումները։ Հենց դրա համար Վ.Վ.Հ-ները լայն չափերով պիտի կիրառեն դրամարկղի տպրանքների և այլ արժեքների հանկարծակի ստուգումները։

Յեռամսակային ինվենտարիզացիան անպայման պիտի կապել կվարտալային հաշվեկշռի ու հաշվետվության ստուգման հետ։ Վ.Վ.Հ-ն պետք է յեռամսյակի աշխատանքի ստուգումը սկսի նախ քան այդ հաշվետվությունը կազմված է։ Առաջին հերթին պետք է սկսի փաստաթղթերի ստուգումը և հաստատել նրանց ճշտությունները ու դրանցումները, ընդվարում պետք է գնահատական տալ ծախսերին ըստ էության։ Վ.Վ.Հ-ն ստուգելով ծախսերը պիտի պարզի. ա) թե վորքան նպատակահարմար են կատարված ծախսերը և բ) թե վորքան են այդ ծախսերը հապատասխանում նախահաշվին։

Անհրաժեշտ է նույնպես ուշք դարձնել ծախսերի ամեն մի փաստաթղթի որինական ձևավորման վրա։ (գնորդի հասցեն, դրամ վճարելու ամիսն ու ամսաթիվը, փաստաթղթի ծախսի

մանրամասն հիմնավորումը, նախագահի և հաշվապահի ստորագրությունները)։

Աշխատանքի այսպիսի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր հաշվեկշռի և հաշվետվության աշխատանքները կկատարվեն անհրաժեշտ արագությամբ և լրիվ կերպով, միաժամանակ զգալիորեն կնվազեցնեն նոր յուրաքանչյուր յեկամուտների և ծախսերի նախահաշվի ստուգումը։

Ամենամեծ ուշադրությամբ պետք է անցկացնել տարեկան ստուգումը։ Ճիշտ կազմակերպված յուրաքանչյուր ստուգումների և հանկարծակի ստուգումների առկայության պայմաններում տարեկան ստուգումը հեշտանում է զգալի չափով, իսկ նրա հետևանքները լրիվ ու արժեքավոր են։

Վ.Վ.Հ-ն պետք է սիստեմատիկ հսկողություն սահմանեն աշխատավարձի կանոնավոր ու ժամանակին վճարելու վերաբերմամբ և ժամկետանցման ամեն մի դեպքի մասին անհապաղ հայտնեն շրջմիությանը։

Այն բոլոր դեպքերում յերբ Վ.Վ.Հ-ին անհրաժեշտ է իր աշխատանքների վերաբերմամբ վորևե խորհուրդ կամ ցուցմունք ստանալ՝ Վ.Վ.Հ-ի նախագահը դիմում է շրջմիությանը։

Վ.Վ.Հ-ն իր աշխատանքների պլանը հաղորդում է շրջմիությանը հրահանգչին, իսկ ստուգումները սկսելիս — գյուղկոոպի նախագահին։

Վ.Վ.Հ-ն իր աշխատանքներին մասնակից պիտի դարձնի գյուղկոոպի սկսիվին, վերջինիս նախորդք պարզաբանելով ստուգում կատարելու կանոնները։

Ամեն մի ստուգման հետևանքները ձևակերպվում են արձանագրությամբ և անպայման հայտնվում են վարչությանը։ Յերբ ստուգումը, պարզում է, վոր վարչությունը մասնակից է ապորենի և հանցագործ գործողությունների — չընդհատելով ստուգողական գործողությունները Վ.Վ.Հ-ն անհապաղ այդ մասին տեղյակ է դարձնում շրջմիության վարչության կամ հրահանգչին,

Գյուղկոոպի առանձին խանութների ու ձեռնարկների աշխատանքների վերաբերմամբ ընթացիկ հսկողություն ունենալու համար Վ.Վ.Հ-ի նախագահը բաշխում է այդ ձեռնարկները հանձնաժողովի առանձին անդամների մեջ։

Վ.Վ.Հ-ի անդամները պիտի իմանան ապրանքների հաշվառման կանոնները և կարողանան վերլուծել գյուղկոոպի փաստաթղթերը, հաշվետվությունները և հաշվեկշիռները։

Դժվարության դեպքում Վ.Վ.Հ-ն իրավասու է ստուգմանը մասնակից դարձնել հարևան կոլխոզի, ՄՏԿ-ի և այլ կազմակերպությունների փորձված հաշվային աշխատողներին։

Իր գործունեության մասին Վ.Վ.Հ-ն հաշվետու է վայաների ընդհանուր (կամ լիազորների) ժողովին. այդ կարգը հաստատված է ԽՍՀՄ ԺԿԽ-ի և Համկ(բ)ԿԿ-ի 29 սեպտեմբերի 35 թ. «Սպառողական կոոպերացիայի աշխատանքների մասին գյուղում» վորոշման մեջ (8-րդ կետ)։

Գյուղկոոպի վարչությունը պարտավոր է Վ.Վ.Հ-ի աշխատանքներին ցույց տալ լիակատար աջակցություն, տալ նրան անհրաժեշտ բացատրություններ և տեղեկանքներ, տրամադրել փաստաթղթերը և գրքերը։ Վ.Վ.Հ-ի անդամներին հրավիրել վարչության նիստերին, ուշադիր լինել դեպի նրանց դիտողությունների գյուղկոոպի սխալների, բացերի վերաբերյալ և միջոցներ ձեռք առնել վերջիններիս վերացման համար։

Վ.Վ.Հ-ի անդամները վարչության նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնով։

Վ.Վ.Հ-ի վորոշումները գյուղկոոպի առանձին աշխատողների վրա տույժ նշանակելու մասին կամ նրանց աշխատանքից հեռացնելու մասին ուժի մեջ են մտնում յերեք որվա ընթացքում, յեթե վարչությունը այդ ժամկետում հանձնաժողովի վորոշումները չի բողոքարկում։

Գյուղկոոպի վարչության կողմից Վ.Վ.Հ-ի գործունեության դեմ խոչնդոտներ հարուցվելու դեպքերում հանձնաժողովի նախագահը պարտավոր է այս մասին անհապաղ հայտնել շրջմիությանը։

Վ.Վ.Հ-ին խորհուրդներով և ցուցմունքներով ոժանդակելը, ինչպես և նրա աշխատանքների վերաբերմամբ ընդհանուր հսկողությունն իրականացնում է հրահանգիչը։ Շրջմիության վարչությունը պարտավոր է պարբերաբար (և համենայն դեպս տարեկան առնվազն յերկու անգամ) հրավիրել Վ.Վ.Հ-ների շրջանային խորհրդակցություններ՝ փորձի փոխանակման և հրահանգման համար։ Այդ խորհրդակցություններից մեկը պիտի հրավիրել տա-

բնավերջին՝ տարեկան ստուգման վերաբերմամբ ցուցմունքներ տալու համար։

Վ.Վ.Հ-ի նիստերը հրավիրվում են ամեն ամիս նախորոք վորոշված օրերին և ժամերին։ Բացի այդ հերթական նիստերից հանձնաժողովի նախագահը կարող է ըստ կարիքի հրավիրել նաև արտակարգ նիստեր։

Վ.Վ.Հ-ի աշխատանքների մեջ շատ խոշոր դեր է կատարում սոցիալիստական մրցումը։ Սոցմրցման պայմանագրերի կնքումը և նրանց կատարման ստուգումը Վ.Հ-ի անդամների ակտիվությունը բարձրացնում է և ստեղծում է բոլոր այն պայմանները, վորոնք անհրաժեշտ են փարձի փոխանակման և առաջավոր Վ.Հ-ների աշխատանքի մեթոդների հավասարվելու համար։

ՀՈՒՇԱՏԵՏՐ ԽԱՆՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻՆ

Խանութային հանձնաժողովի անդամ.—վայտաներները քեզ ընտրել են նրա համար, որ դու ստուգես խանութի աշխատանքը և ոգնես այն ավելի լավացնելու։ Հիշիր, որ քո ակտիվությունից և նշանավոր չափով կախված խանութի աշխատանքի վորակը։

Քո ամենաառաջին պարտականությունը կայանում է նրանում, որ դու ամենորյա հսկողություն ունենաս խանութներում պարտադիր ասսորտիմենտի մշտական առկայության վրա, որ վաճառողն ուշադիր վերաբերմունք ունենա գեպի սպառողների պահանջները, որ խանութում պահպանվի մաքրություն և կարգ ու կանոն, որ գնումներ կատարող սպառողներին խանութում չխաբեն։

Քո ամբողջ աշխատանքում մի մոռանա ընկեր ՍՏԱԼԻՆԻ ցուցումն այն մասին, որ «Թույլ տալ հանրային սեփականության գողացումն ու հափշտակումն—միևնույն է՝ բանը վերաբերվում է արդյոք պետական սեփականությանը, թե կոոպերատիվ ու կոլտնտեսային սեփականությանը,—և անցնել նման հակահեղափոխական այլանդակությունների կողքով,—նշանակում է՝ նպաստել խարխլելու խորհրդային հասարակարգը, որը հենվում է հանրային սեփականության վրա, որպես իր բաղայի վրա»։

1. Կանոնավոր, սահմանված որերին և ժամերին հերթապահիր խանութում, այլ և մի—մի անդամ հանկարծակի ստուգման նպատակով խանութը հաճախիր հերթապահությունից դուրս ժամերին։

2. Ստուգիր պարտադիր ասսորտիմենտի ապրանքների առկայությունը։ Ստուգիր թե վորքան ճիշտ և վաճառողը անհրա-

ժեշտ ապրանքների պատվեր կազմում և հետևիր, թե վորքան ճշտությամբ և ժամանակին և վարչությունն այդ պատվերները կատարում։

3. Հետևիր, վոր ապրանքները վաճառվեն սահմանված գներով։ Ապրանքների վաճառքի գները համեմատիր գնացուցակի գների հետ։ Մի թույլատրիր, վոր ցածր տեսակի ապրանքները վաճառվեն ավելի բարձր գներով։ Խստորեն հետևիր, վոր ապրանքների վերագնահատումից հետո ապրանքները վաճառվեն սահմանված նոր գներով։

4. Հետևիր կշռաքների և կշռաքարերի կանոնավոր գրությանը և նրանց մաքրությանը։ Մի թույլատրիր, վոր գործադրության մեջ լինեն չկնքված կամ կոտրված կշռաքներ։ Վոչ մի դեպքում մի թույլատրիր կշռաքարերի փոխարեն գործադրել այլ առարկաներ (սապոնի կտոր, հասարակ քարի կամ յերկաթի կտոր և այլն)—կամ կշռքի ափսեների տակ դնել կոշտակի առարկաներ։

5. Հետևիր, վոր ապրանքները վաճառվեն մաքուր քաշով և լրիվ չափով։

6. Մի թույլատրիր, վոր ապրանքները վաճառվեն ապառիկ—և տոմսակներով, ինչպես և մի թույլատրիր, վոր վաճառողն ապրանքներ վերցնի իր կարիքների համար ապառիկ։

7. Հետևիր, վոր վաճառողը կանոնավոր ընդունի խանութ մտնող ապրանքները։ Պահանջիր, վոր կշռովի ապրանքները վերակշռվեն, իսկ հատով ապրանքների քանակն ստուգվի։ Պակասորդի, ավելցուկի, ինչպես և ֆակտուրայի ու հաշվի մեջ տարբերություններ հայտնաբերելու դեպքում արձանագրություն կազմիր։ Հետևիր, վոր ստացված ապրանքները մուտք գրվեն խանութին՝ նրանց ստացման որը։

8. Անպայման մասնակցիր խանութի ինվենտարիզացիային։ Հետևիր, վոր ստուգումը կատարվի իրապես բոլոր ապրանքների կշռման, համբելու և չափելու միջոցով և ցուցակներում նշանակվեն նրանց ճիշտ գները։ Վոչ մի դեպքում ինվենտարիզացիայի ընթացքում մի թույլատրիր ապրանքների փոխադրումներ տեղից տեղ, այլ պահանջիր, վոր նրանք ստուգվեն այն հաջորդականությամբ, ինչպես դասավորված են խանութում։

9. Վոչ մի դեպքում մի ստորագրիր խոտանման, փչացման

և վոչնչացման մասին վորևե արձանագրություն [illegible] վերջիններս կապված են պատանց քո մասնակցության [illegible] դու անձամբ չես հաճոզվել նրանց խոստանման, փչաց[illegible] մ վոչնչացման իրական լինելու մեջ։

10. Խոստովան հետևիր, վոր խանութը պահվի մաքուր ու կարգին դրության մեջ։ Ամենափոքր թերությունն իսկ հայտնաբերելու դեպքում խանութի աշխատողներից պահանջիր անհապաղ վերացնել այն։ Խանութի հաճախորդներից պահանջիր ամենահոգատար վերաբերմունք դեպի խանութային գույքը։ Հետևիր, վոր հաճախորդները խանութը չկեղտոտեն։ Ստուգիր թե ինչպես են խանութի աշխատողները կատարում գյուղկոոպի վարչության կողմից սահմանված ներքին կանոնները. (հատակները լվանալը, ապակիները մաքրելը, տպրանքների կարգի բերելը և փոշիներից ազատումը)։

11. Քո սկսած ամեն մի գործդ հասցրու իր վերջին։ Խանութի բացերի ու թերությունների մասին հայտնիր գյուղկոոպի վարչությանն ու Վ.Վ.Հ-ին։ Անպայման նպատակ դիր հայտնաբերածդ թերություններն ու բացերը վերացնել և վերացրու։

12. Քո աշխատանքի մեջ անպայման հենվիր խանութի հաճախորդ կոլխոզնիկների, մոնտավանդ կոլտնտեսուհիների վրա, լսիր նրանց բողոքները. ամեն մի բողոք ըստ էության հետազոտիր։

13. Անպայման կապվիր Վ.Վ.Հ-ի հետ և նրան ոժանդակիր իր աշխատանքի մեջ։

14. Մրցման մեջ մտիր հարևան խանութի խանութային հանձնաժողովի հետ։ Ոգնիր քո հսկողության հանձնված խանութին հարևան խանութի հետ կնքված սոցմրցման պայմանագրի լավագույն կատարման համար։

Քո պատվի գործն և հանդիսանում այն, վոր դու քո հաժառ աշխատանքով թեզ հսկողության հանձնված խանութն որինակելի դարձնես թե սպառողների կուլտուրական սպասարկման և թե առևտրի աշխատանքի վորակի մաքով։

Խանութային հանձնաժողովը 3—7 հոգի (նայած խանութի շրջանառությանը) կազմով ընտրվում է առանձին խանութի սպասարկման յենթակա գյուղկոոպի փայատերերի ընդհանուր ժողովի կողմից և հաշվետու է նրա առաջ։

Հանձնաժողովի ընտրությունից հետո գյուղկոոպի վարչու-

ՀՍՍՌ [illegible]
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

Ա 2340

թյան նախագահ և վ.վ.Հ-ի նախագահը ժամանման հրահանգման են յինթուռ խանութային հանձնաժողովի անդամներին՝ պարզաբանելով, թե ինչ կարգով պիտի խանութին ստուգել, ինչպես տանել վերահսկողության աշխատանքները և այլն, մի-մի անգամ (և համենայն դեպս յուրաքանչյուր առնվազն մի անգամ) գյուղկոոպի վարչությունը հրավիրում է խանութային հանձնաժողովների ընդհանուր խորհրդակցություններ փորձի փոխանակման և հետագա աշխատանքների համար ցուցումներ ու հրահանգներ տալու նպատակով։

Այդ խորհրդակցություններն ոգտագործվում են առանձին խանութային հանձնաժողովների մեջ սոցմրցման պայմանագրեր կնքելու, սոցմրցման պայմանագրերի կատարումն ստուգելու, ինչպես և առաջավոր ու լավագույն խանութային հանձնաժողովներին պարգևատրելու համար։

ՊԱՅՔԱՐ ՅՈՒՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՎԱՏՆՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

«Հանրային սեփականությունը (պետական, կոլխոզային, կոոպերատիվ) խորհրդային կարգերի հիմքն և հանդիսանում. նա սրբազան է յեվ անձեռնմխելի յեվ այն մարդիկ, վորոնք հանրային սեփականության վրա փորձ են կատարում, պետք է դիտվեն վորպես ժողովրդի թշնամիներ»: ՀՍՀՄ ԿԳԿ յեվ ԺԿՀ-ի 7 ոգոստոսի 1932 թ. վորոշումը):

Վարչությունն ու վերատուղիչ հանձնաժողովը պետք լավ հիշեն, վոր վատնումներն ու յուրացումները—դասակարգային թշնամու ձեռքերի գործն է, վոր դասակարգային թշնամու «գործունեությունը» հատկապես այնտեղ և դրսևորվում վորտեղ չկա զգոնություն, վորտեղ թույլ և վերահսկողությունը, վորտեղ վատ և դրված հաշվառման գործը:

Այն դեպքերում, յերբ վատնումներն ու յուրացումները հետևանք են վերահսկողության բացակայության կամ հաշվառման վատ դրվածքի, գյուղկոոպի վարչությունը յենթակա յե դատական պատասխանատվության՝ հիշյալ հանցագործությունները կանխելու համար ժամանակին ու անհրաժեշտ պայքարի միջոցներ ձեռք չառնելու համար:

Պայքարի ճիշտ ու վճռական միջոցառումների կենսագործմամբ հիշյալ հանցագործությունները կարող են խիստ վերացվել:

Այս նպատակով գյուղկոոպի վարչությունը պարտավոր է—

ա) Առևտրական ու այլ աշխատողների ընտրությունը կատարել գերազանցապես տեղական ընակիչներից, վորոնք վարչությանն ու փայատերերին հայտնի յեն վորպես բարեխիղճ ու աշխույժ մարդիկ:

Մանրամասնություն.—Կոլմնակի, վոչ տեղացի, մարդկանցից գյուղկոոպը կարող է ծառայության ընդունել միայն նրանց, վորոնք ունեն լավ գնահատականներ գյուղկոոպի կամ Շրջմիությունը վստահությունը վայելող անձնավորությունների կողմից։

բ) Կարգի դնել ապրանքային ու այլ արժեքների ժամանակին ու ճիշտ հաշվառումը։

գ) Կատարել գյուղկոոպի ապրանքների, դրամարկղի ու այլ ունեցվածքի պարբերական (կվարտալը առնվազն մի անգամ) և հանկարծակի ստուգումներ։

դ) Գյուղկոոպին պատկանող ապրանքային և այլ արժեքների պակասորդներ հայտնաբերելու ամեն մի դեպքի մասին անհապաղ տեղեկացնել շրջանային դատախազին և շրջմիության վարչությանը։

ե) Կանոնավոր հետևել դատարանին հանձնված գործերի ընթացքին, պնդել, վոր վատնողներն ու յուրացումներ կատարողներն որինական պատիժ ստանան և վատնված (յուրացված) գումարների քաղաքացիական հայցը ժամանակին բավարարվի։

զ) Միջոցներ ձեռք առնել վատնումների ու յուրացումների հետևանքով գյուղկոոպի կրած վնասները անհապաղ հատուցելու (մեղավորների գույքի վերգրումի, նրանց խնայդրամարկղում ունեցած գումարների վրա կալանք դնելով և այլն)։

է) Ոժանդակել վերատուգիչ հանձնաժողովին գյուղկոոպի ձեռնարկների ստուգման գործում։

Յուրացում կամ վատնում կատարող աշխատակիցը գյուղկոոպի վարչության կողմից ժամանակավորապես հեռացվում է աշխատանքից և նրա գործն ուղարկվում է շրջանային դատախազին։ Դատարանի սեղմրական դատավճռից հետո նման աշխատակիցը բոլորովին հեռացվում է գյուղկոոպի աշխատանքից։

Հեռացվող աշխատակցի հետ գյուղկոոպը վերջնական հաշվարկ է կատարում միայն նրա արամադրության տակ առնված գտնվող ապրանքային ու այլ արժեքների լրիվ հաշվառվությունից, ինչպես նրանց մնացորդների և տասնագիտական հագուստի լրիվ հանձնումից հետո։

Գյուղկոոպի բոլոր արժեքների հաշվառման գրվածքը պիտի ապահովի վատնումների ու յուրացումների ամենաարագ հայտնաբերումը։

Գյուղկոոպի հաշվապահը (հաշվետարը) պարտավոր է ապրանքային ու այլ արժեքների պակասորդ հայտնաբերելուց անմիջապես այս մասին հայտնել գյուղկոոպի նախագահին վոչ ուշ քան 5 որվա ընթացքում կարգավորի այն բոլոր փաստաթղթերը վորոնք հաստատում են հայտնաբերված պակասորդները։

Գյուղկոոպի հաշվառման գործի վատ դրվածքի համար պատասխանատու են ինչպես գյուղկոոպի վարչությունը, նույնպես և հատկապես գյուղկոոպի հաշվապահը (հաշվետարը)։

Գյուղկոոպի նախագահը պարտավոր է 1000 ռուբլուց ավելի վատնումի և չարաշահության ամեն մի դեպքի մասին անհապաղ հայտնել Հայկոոպին։ Եթե վատնված կամ յուրացված գումարը 200 ռ. պակաս է՝ շրջմիությունն նախագահն անմիջապես ինքն է գործուղվում անձամբ տեղում ապահովելու վատնված գումարի հետ գանձումը։ 1000 ռ. ավելի վատնումի կամ յուրացման հայտնաբերման դեպքում նույն նպատակով շրջան է մեկնում Հայկոոպի վարչության անդամներից կամ պատասխանատու հրահանգիչներից մեկը։ 5000-ից վեր գումարի վատնումների կամ յուրացման դեպքերում նույն նպատակով գործուղվում Հայկոոպի վարչության նախագահը կամ նրա տեղակալը։

Պակասորդի հայտնաբերման դեպքում գյուղկոոպի նախագահը պարտավոր է խստությամբ պարզել, թե ով է այդ պակասորդի համար անձնապես պատասխանատու։ Միաժամանակ պիտի պարզել թե հայտնաբերված պակասորդը հետևանք է աշխատակցի կողմից կատարված յուրացման (վատնման), թե նրա անփույթ վերաբերմունքին դեպի հանրային գույքի պահպանման գործը, կամ թե նրան ի պահ տրված հանրային գույքը հակողության պատճառով յուրացվել ու վատնվել է այլ անձնավորությունների կողմից (որինակ խանութը առանց կոխպելու թողելու հետևանքով, գողության և այլն)—այս դեպքերում պիտի միջոցներ ձեռք առնել պարզել այդ անձնավորությունների ով լինելը։ Եթե վատնում կամ յուրացում կատարողներն ունեն նաև գործակիցներ—անհրաժեշտ է պարզել այդ գործակիցներին։

Պակասորդի հայտնաբերած որից յերկու որվա ընթացքում գյուղկոոպի վարչությունը պարտավոր է կարգավորել բոլոր փաստաթղթերը, վորոնք հաստատում են այդ պակասորդը և

պարզել թե ով և վերջինիս համար պատասխանատու։ Ամբողջ գործն իր մանրամասնություններով գյուղկոոպի վարչությունը անմիջականորեն կամ շրջմիության միջոցով ուղարկում է շրջանային գատախազին՝ խնդրելով հանցավորներին յենթարկել քրեական պատասխանատվության և միաժամանակ կալանք դնել հանցավորի ունեցվածքի վրան՝ գյուղկոոպին հասցրած վնասները ծածկելու համար։

Վատնումներն ու յուրացումներն առանձնապես տարածված են այն գյուղկոոպներում որտեղ անգործունեության են մատնված վերստուգիչ հանձնաժողովները։ Հենց այդ պատճառով յուրացումների ու վատնումների հայտնաբերման դեպքում վերստուգիչ հանձնաժողովի անգործունեության կապակցությամբ գատի պիտի յենթարկել իսկական վատնումների ու յուրացումների հետ նաև վերստուգիչ հանձնաժողովի ու վարչության անդամներին, որոնք չեն կանխել այդ վատնումներն ու յուրացումները։

Վատնումների ու յուրացումների դեմ պայքարի գործում շատ խոշոր անելիքներ ունեն շրջմիությանի հրահանգիչները։ Վերջինս պարտավոր է, մասնավորապես, վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի անդամներին սովորեցնել ստուգումներ կատարելու գործին, ինքն անձամբ ստուգումներ կատարել, ցուցումներ տալ տպրանքների պահպանման մասին, ստուգել վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը՝ թե որքանով նրանք ձեռնարկում են կանխող միջոցառումներ վատնումներ ու յուրացումների դեմ։

Շրջմիության հրահանգչի ուսկայությունն ամենավերջը չափով անդամ չի ազատում գյուղկոոպի վարչությանը, վերստուգիչ հանձնաժողովին և հաշվետարին գյուղկոոպի վատնումների ու յուրացումների համար սահմանված պատասխանատվությունից։

Հատուկ ուշադրություն պիտի դարձնել վարչության փոփոխության դեպքերում գործերի կամ խանութի հանձնման և ընդունման դեպքերում սահմանված կանոնների խստորեն պահպանման վրա։

Ցենտրոսայուզի վարչության պլենումը 1935 թ. հուլիսի 1-ին որոշել է.—այդ կանոնների խախտման դեպքում յուրաքանչյուրվում են գործերի խառն վիճակ և գործերը հանցն-

վում և ընդունվում են առանց հանձնման—ընդունման ակտերի—պատասխանատվության են յենթարկվում հավասարապես թե գործերի հանձնողները, թե ընդունողները։

Վատնումների և յուրացումների վերաբերիալ գործերը համաձայն գոյություն ունեցող վորոշումների դատական մարմինները պիտի քննության յենթարկեն 20-որից վոչ ավելի ժամկետում։ Գյուղկոոպի նախագահն անձամբ (կամ շրջմիության միջոցով) պետք և խիստ կերպով հետևի այդ վորոշման կենսագործմանը։ պետք և անձամբ դատարանում պաշտպանել գյուղկոոպի քաղաքացիական հայցը կամ ապահովել այդ հայցի պաշտպանությունը շրջմիության միջոցով։

Յեթե դատարանն այս կամ այն պատճառով մերժի քաղաքացիական հայցի բավարարումը՝ գյուղկոոպի վարչությանն իրավունք և վերապահվում 10 որվա ընթացքում լրջոք տալ ավելի բարձր դատական մարմիններին։ Բացի այդ յեթե գյուղկոոպի ներկայացրած տվյալներն անբավարար են նրա կրած վնասների ճիշտ գումարը վորոշելու համար—դատարանը կարող և գործի վերաբերյալ վճիռ կայացնել և դատավճռի մեջ առանձնապես շեշտել, վոր գյուղկոոպն իրավունք ուն իր վնասների բավարարումն ստանալ, իսկ վնասների չափը վորոշվում և լրացուցիչ կերպով։

Դատարանի կողմից գյուղկոոպի քաղաքացիական հայցը բավարարելու և դատավճիռն ուժի մեջ մտնելու դեպքում գյուղկոոպի վարչությունը դատարանից պարտավոր և ստանալ կատարողական թերթ՝ իր վնասների դիմաց դատարանի վորոշված գումարները գանձելու համար։

Վատնումների և յուրացումների դեմ դատարանի վորոշված գումարների գանձումը կատարվում և հերթից դուրս։

ՀՍՍՌ ԳԻՏ. ԱԿԱԴ.
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻՊ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003323

196

[074.]

A II 23461